## 76. ԿԱՍԱԲԵ ՋԵՌՄԱՐԴ

Մարթում մեկ ունէր լավ ծիմ, խորոտ կնիկմ: Վեր ուր ծիյուն, վեր ուր կնգյան շատ ուրախ ի: Օրմ ասաց. - Իմ ծիյու, իմ կնգյան պես գեղեցիկ կա՞: Աջաբա իմ ծին, իմ կնիկ, որ խանեմ ծախս, ինոնց գյին ի՞նչ ի:

• Խզմաթքարին կանչեց, ասաց. - Ծիյուն լավ եմ տաս, այարն զանես, իսկ ուր գյամ տնես, տանես բազառ, քյսան ոսկի կուտան, ճիսուն ոսկի կուտան, խարեր ոսկի կուտան, մեյ խոսքյ՝ ինչ որ կուտան՝ չի տաս, ճիրիկուն առնես իմ ծին գյաս:

Մշայն առեց կնաց բազառ: Ծին խանեց ծախ: Քյսան ոսկի տվին՝ չի տուր. եռսուն տվին՝ չի տուր, չում Էրկու խարիր ոսկի տվին՝ չի տուր. առեց պերեց տուն: Աղեն շատ ուրախցավ:

Ասաց. - Աջաբա, իմ կնգյան գյի՞ն ինչ պիտի էլնի:

Կանչեց ուր մշակուն, խանեց ինոր բաշխիշ ի տուր, ասաց. - Առատուն կուգյաս քյու խանմ կտանես բազառ՝ ծախա:

Առատուն մշայն էկավ, խանմի խալվներ խանգյիվցից, տրեց ծիյու վերեն, տարավ քյաղքյի բազառ:

Ջաբիթներ էկան, թյուջրներն էկան, թեջիրներն էկան, խանմին գյին կուտան, խարեր ոսկով կուտան, էրկու խարիր ոսկով կուտան, մեկ վեր մեկուն կյավելցուցի:

Հալբու մարթում մեկ, թեջիր ի, էտա կնգյան իտուր էրկու խազար ոսկի:

Ծոտ արաց, ուր պաներ կապեց, կայնավ ծովու քյննոր, փափոռն էկավ կնդավ. մտավ մեջ փափոռին: Կնաց ճասավ Հալյաբ:

Էսա թեջիրին ախպերմ կա, ժամանակով ջալատութեն կաներ:

Ժամխներ կպռներ, մարթեր կթալներ, մարթեր կսպաներ, սորա փոշման էլավ ուր արւածին, ասաց՝ էսա մարթասպանութեն պիտի թարկեմ: Թարկեց: - Ոչխար առնեմ. փաքյիր, ֆուքյարին պիտի ոչխրի միս տամ, վառձքյ վաճառ անեմ: Ինոր անուն տրվավ, Կասաբե Ջեռմարդ:

Խանութ պռնեց, էսօր ինադուն միս կիտա էդա կնգյան տեր, ճիրիկուն որ մշակ գնաց, ասաց. - Տղա՛, յու՞ր է խանմ:

Ասաց. - Աղա, խանմ ծախեցի:

Ասաց. - Տղա՛, ի՞նչ կասես:

Ասաց. - Խա՛, ծախեցի:

Ծեռաց ալնախ պռնեց, ասաց. - Տէ՛ս ոսկիքյ՝ էրկու խազար խատ ի:

Ասաց. - Տղա՛, ես ոսկին ի՞նչ անեմ, ես քյե ասիցի մու գին խասկցի:

Քյոխւսվ. կռիվ արաց խետ տղին: Սիլեմ էրկու ծեփեց տղի իրիսին:

Մշայն ասաց. - Տյու զիկ ասիր՝ տար ծախ, տյու զիկ ասիցի՞ր՝ պե, տյու զիկ չասիցիր պե: Ծիյու խամար ասիր, ինչ որ կուտան չի տաս, պիրես ետ: Ես պիրեցի: Խւսնմի խամար ասիր՝ տար ծախ, չասիր ետ պե: Ես էլ կիտցա կասիր՝ տար ծախի, փարեն պե: Ծախեցի, փարեն պիրի:

Աղեն առեց ալնխով փարեն, կնաց բազառ, էնկանդար աչկեց, մարթն չտեսավ:

Խարցում արաց, փնդռտեց, ասաց. - Աջեբա, Հալբու թեջիրմ կեր, ի՞նչխ էլավ:

Մարթու մեկ ասաց. - Խանջուն խարցնի:

Կնաց մոտ խանջին, ասաց. - Հալբու թեջիր յու՞ր է:

Ասաց. - Կնաց, ուր էլած-չէլած կապեց, մտավ փափոռ, կնաց Հալնբ:

Թփեց մեջ ուր գյլխուն, իլաց:

Ասաց. - Հե՛յ վախ, ի՞նչ արիցի իմ ծեռնով: Խազար ափսոս, որ իմ կնիկ իմ ծեռնով տվիցի տյուս:

Իլա՛ց, տփեց մեջ ուր գյլխուն:

Էսա տեխ կնա̈ց, էնա տեխ կնաց, մարթում մեկ ասաց. - Էն որ տյու քյու ծեռնով արիր ես, քյու ոտնով պիտի յիտև կան գյաս:

Էլա̈վ մտավ ուրիշ փափոռմ: Կնա̈ց Հա̈լբու քյաղաքյ տյուս էլա̈վ:

Խեղճ-կրակ, անտեր-անտիրական ֆռաց ըստեխ, էնտեխ:

Մարթ չճանչնա: Տեղ չկիտի: Փողան չկիտի, խեղճ սեֆիլ կան կգյա̈: Կնաց քյոշեմ, կասբիմ ռաստ էկավ: Կասաբ կտորմ միս կտրեց, իտուր էդա մարթու ծեռ: Մարթն առեց, քյելեց: Տա̈ռցավ, ասաց ուր. - Ես միսն ի՞նչ անեմ, իմ պերա̈ն չէրթա̈ պա̈ն ուտեմ, մա̈ղդա̈ չկա, որտե՞ղ եփեմ:

Տարավ իտուր կասբուն:

Կասաբ ճեռչ կտորմ կտրեց իտուր:

Տարավ էնտեխ, տա̈ռցավ էլմ պիրեց իտուր կասբուն:

Կասաբ խանեց ոչխրի մեկ յան իտուր:

Մարթն էլմ ետ տա̈ռցուց:

Կասաբ վերեն սրթխավ, ասաց. - Տյու ընչի՞ իմ տվածներ կպիրես թփես վեր իմ կոտին: Ջի Կասաբե Ջեռմարդ կասեն, ինչխ կզա̈րկեմ, միս կկտրեմ, ըսկուն քյու վիզ կկտրեմ: Ասա խենքյ ընչի՞ չառիր իմ միս:

Կասի. - Ի՞նչ անեմ խե մսին: Իմ դա̈րդն շատ ի: Ես դա̈րդի տեր իմ:

- Քյու դա̈րդն զիկ ասա, խենքյ քյո դա̈րդն ի՞նչ ի:

Կասի. - Իմ դա̈րդն իմ կնիկն ի: Հա̈լբու թեջիրմ իմ կնիկ կգյնի, կառնի կուգյա̈ ըստեղ: Ես եկեր եմ իմ կնգյա̈ն իտև կֆռամ:

- Որ ըսկուն ի, քյե կտանեմ իրիկուն իմ տուն:

Իրիկուն տարավ ուր տուն, խաց կերան:

Ասաց. - Հայ մարթ, քյու կնիկ ի՞նչխ պիրիցին:

Ասաց. - Աղա՛, ես իմ կին, իմ ծին շատ կսիրե, ասի՝ ա̈ջեբա̈ իմ կնգյա̈ն, իմ ծիու պես, էսա Ըստամբեոլա̈ քյաղաքյի մեջ կկնդվի՞: Իմ կոտրած պերնով իմ կնիկ մշակուն տվի, ասի՝ տար խան՝ ծախա, խենքյ ի՞նչ կուտան: Մշակն իպե ծախեց, ես ինոր չասի՝ իմ կնիկ չծախես, ստնես պիրես: Մշակ ծախեց, փարեն իպե:

Կասի. - Աղեկ, եթե որ քյու կնիկ տիսնաս, կճանչնա՞ս:

Կասի. - Խա՛, ի՞նչխ չեմ ճանչնա:

- Աղեկ, որ քյու կնիկ քյե տեր չիլավ, ես քյո վիզ կկտրեմ:

Ասաց. - Իմ կա̈բյուլն ի:

Առատուն տարավ, ւսսաց. - Կայնի էսա պանցր տան տակ. կանչի քյո կնիկ:

Մարթն կայնավ. կանչեց. - Գյուլիզա՛ր:

- Ջա՛ն, քյե կուրբան, տյու էկա՞ր, - ասաց կնիկ վիրանց:

Ծոտըմ տոներ իպնեց. էկավ ուր էրկան ծեռ պոնեց:

Էն տեխեն թեչիրն էկավ, ասաց. - Էդա կնիկ իմն ի. էդւս ես Ըստամբեոլա մեչեն փնրով եմ գյնե, պիրե:

Ախպերն՝ Կասաբե Ջեոմարդ թուրմ իջուց. ախպոր գյլեոխ թոուց:

- Դե՛, առ քյու կնիկ. կնա էսա երկրից:

Մարթն առեց ուր կնիկ. էկավ Ըստամբեոլ:

Քյանիմ տարի մնաց, Հալբու քյաղքյի մեչ սով ինգյավ: Ըսկուն սովմ էլավ, որ մեր զտղեն կուտի:

Կասաբե Ջեոմարդ ինչ որ ուներ, հմեն ծախեց ուր ճժերւսց կիրիցուց, պամ չմնաց, էլավ մուրացկան, իտոր մեջաց մեջկապն էլավ մեյ խա շարան:

Ուր կնգյան ասաց. - Մենքյ Հալբու մեչ չենքյ կանա շախվե. չվան պե, մեր էլած-չէլած տնենքյ վերեն, շլկենքյ ինենքյ աշխարհ:

Փոացին ըստեղ, էնտեղ, ճար չկւսրցան կնդնին. էկան էտա Ըստամբեոլ:

Տղեյներ իտեր խորխոռներաց պես խարաբն տեղմ. չվան առեց համլութեն կանի:

Չարշիի մեչ կպտտեր, էն մարթ որ կին ծախեր էր, ռաստ կուգյա Կասաբե Ջեոմարդին:

Ալնախմ իտուր Կասաբի ծեռ. ասաց. - Արե էրթանքյ չում մեր տուն:

Մարթուն տարավ տուն: Խանեց դնստեմ խաց ինան քյսան կուոուշ փարա իտուր:

Ասաց. - Ո՞րտեղ կմնաս:

Ասաց. - Խորխոռներ:

Ասաց. - Տար թո քյո ճժերն ուտեն, առատուն շոտ արե շուկեն. զի կնդի:

Կասաբն շատ ուրախցավ:

Կնաց տղեյներաց ասաց. - Խաց կերեքյ. աստծուն տուվա արեքյ, որ աստված օխնի էն մարդուն, որ էսա խացն իտուր ծե:

Իրիկուն քյնան. առատուն շոտ չվան առեց վազեվնազ կնաց շուկեն:

Աղեն էլ շոտ կնաց չարշին: Մ՚է մեկէլ տեսան:

- Արե. քեզնից խառցում անեմ, ո՞րտեղեն ես:

Ասաց. - Հալբու եմ:

Ասաց. - Քյո կնիկ, տղեն շա՞տ են:

Ասաց. - Վեց ջան եմ:

- Որ ըսկուն ի. կնա քյո կնիյ. տղեն առ արե: - Մարթն կնաց կնիյ. տղեն առեց էկավ մոտ աղեն:

Աղեն իտոնքյ առեց կնաց մո թերձւսկ: Իտոր տղեյներաց ձեռքյե-ձեռքյ խալւսվ կտրեց: Ուր կնգյան խալվից ձեռքյմ էլ Կասաբու կնգյան խալավ կտրեց: Մեյ ձեռք էլ իսկ ուր խալվից Կասաբին կտրեց:

Հիրկուն տարավ կնաց ուր տուն: Աման ուր կնգյան չասաց, թե էսա էն Կասաբն ի, որ քյե առեց իտուր զի:

Կիրիցուց. խմցուց, մեկ ամիս շախեց: Չուր Կւսսաբ ճուր ճամբախ ճանչցավ:

Աղեն օրմ առեց Կասաբին. գնաց ուր կոնխի մեչ. ասաց. - Էսա տներ հմեն էլ տեսա՞ր:

Տարավ էնտեղից ուր տյուքնտանքյ:

Կտանի ուր փա̈րեն, ուր էլա̈ծ-չէլած, ուր ա̈մբրներ, ուր տա̈վրներ հմեն շանց կուտա:

Կասի. - Տյու տեսա՞ր իսոնքյ:

Կասի. - Խա՛, տեսա:

Կասի. - Էսա մեկ դաիրեն՝ քյե, էսա մեկ դաիրեն՝ զի: Էսա դյուքընտանք՝ քյե. էսա՝ զիկ: Էսա տավրներ՝ զիկ, էսա՝ քյե: Էսա գյեողվենքյ զի, էսա՝ քյե:

Մեյ խոսքով ուր տան էլա̈ծ-չէլա̈ծ, մեկիկ կկիսի խետ էտա մե:րթուն:

Սորա կասի. - Դե՛, մկա ծեռ տու, ըլնենք ախպեր:

Ծեռ տվին ծեռաց, էլա̈ն ախպեր:

Առատուն կլնեն վեր, խաց կուտեն:

Աղեն կասի. - Էլի, ես տյու էրթա̈նքյ հյուքմա̈թ:

Կէրթա̈ն հյուքմա̈թ, ուր տան մեկ փարչեն թա̈փի կանի վեր ախպոր: Դյուքյանտանքյն էլ թա̈փի կանի վեր ախպոր:

Էլա̈ն էկան տուն: Էն կա̈նդա̈ր սիրով են խետ մեյմկու, որ չեն հա̈տա̈կե չում ուրենց խացն ուտե: Ծոտմ կէրթեն մոտ մեյ մեկու դիվան կա̈նեն:

Էդա ըստամբեոլցին, որ կնիկ Հա̈լքու իպե, նոր թուժատան հղացավ, լա̈ճ տղեմ իպե:

Լաճն ի գյեռ տաս-տսվերկու տարեկան կա: Էտա Կասաք ուր կնիկ էդա լաճուն չա̈նց ինոնց տղեն շատ կուզեն: Էն կա̈նդա̈ր կուզեն, որ կպիրեն մեջ ուրենց էրկուս կպառկցուցեն:

Էն մեկ օր հիրկուն խաց կերան. Կասաք կնա̈ց մոտ ախպեր:

Կասաքու կնիկ տեղ շինեց, աղի լաճ առեց խետ ուր կողին, պառկավ քյնավ:

Կասաք գյեռ մոտ աղեն ի: Դիվնից էկավ կիշկա, որ կնգյա̈ն ծոց մարթ կա: Թուր քյաշեց, զա̈րկեց, ուր աղի լաճ սպանեց:

Կնիյն ասաց. - Աստված քյու տուն ավիրի, ընչի՞ ախպորտ տղին սպանիցիր:

Լա̈ցին, ողբացին, ինոնց մեյ տղեմ կեր տաս-տսվերկու տարեկան, խեր-մեր առին տարան լա̈լով մոտ աղեն, ասին. - Չկիտութնով քյո տղեն սպանեցինքյ. էսա քյու տղի բա̈դա̈լ. պախի մո քյե, սիրի:

Ասաց. - Լաճմ էր, սպանիցիր, սպանիցիր, քյե կուրբան ըլնի, ինոր օր ըսկուն էր իկե:

Ծատ լա̈ցին, մոմռացին, ասին՝ պիտի առնես քյո տղի տեղ:

Էնքյան արիցին, մարթն չառեց, ասաց. - Խա̈զա̈ր խա լաճ ծե կուրբա̈ն կանեմ:

Ըսկում, յաման կտրցուցին, մարթն առեց: Կասաք, ուր կնիկ կնա̈ցին ինոնց էօդի մեջ: Աղի կնիկն ասաց. - էսա մարթ մե ի՞նչ էր, մեր էլա̈ծ-չէլած տվիր իսոր. մկա էլ մեր տղեն սպանեց, էսա մարթ մե ի՞նչ էր:

- Կնիկ, - ասաց, - պա̈ն որ աստված կիտե, տյու էլ իմցի: Էսա էն մարթն էր, որ Հա̈լաք ուր ախպերն սպանեց քյե իտուր զիկ: Ես կլնեմ էն մարթուց տղա՞ կուզեմ: Քյո ասածն ի՞նչ ի՝ աղեկ եմ արե, թե՝ գյեշ:

Կնիյն ասաց. - Խա̈զա̈ր խա տղա, որ էնպես ի, կուրբան ըլնի էն մարթուն: Էլի էհա̈նք մեյտեղ ճյուր տո̈յցուցենք. մեր տղեն վլա̈նքյ, պատանքյ կարենքյ:

Կնացին էն տեն, Կասաք, ուր կնիկ, նստած տղի մեկ կող, մեկ կող վրեն կուլան:

Ասաց. - Մի՛ լացեքյ, խա̈զա̈ր խատ ըսկուն տղա կուրբան էլնի քյո ծեռաց:

Մեյ տեղ վլա̈ցին, չորսով պլստայհ կարիցին, թաքյութ դրին, տարան խորիցին:

Կասաբ, ուր կնիկ կնացին մոտ աղեն, ինոր ծեռ ոտ պաչքյեցին, ասին՝ Էսա տղեն պիտի քյո տղի տեղ կաբյուլ անես:
Ասաց. - Շատ աղեկ, իմ տղեն, քյո տղեն, ֆարկ չկա: Կաբյուլ արիցի:
Լաճ տղեն ճամխեց քյանիմ սահաթ զատ տեղմ, իտիր վարժատուն:
Լաճ ութ տարի դա սովրավ, աղեկ ուսում առեց: Կասաբն էլ էտա տեղ աղեկ թյուչարմ տյուս ինգավ:
Լսավ, որ Հալբու քյաղաքյ սով վիրցվեր ի: Շատ ւանոշցեր ի: Ինոր տրկցներ ջյույաբ կճամխեն՝ արե վեր քյու խող-քարին, վեր քյու տան-տեղաց:
Միտք փոխեց Հալբու էրթալու:
Կասաբ էկավ կնգյան ասաց, թե. - Մեր պարեկամներ մեզ կկանչեն, էլի էթանքյ Հալաբ մեր խերանական երկիր:
Կնիյն ասաց. - Աղե՛, մենքյ էրթանքյ, ապա էսա մարթ որ էսակյանդար աղեկութեն արաց:
- Ի՞նչ կա, էն աղեկութենմ էր արաց: Չէլավ, ուր տվածներ կուտանքյ ինոր, կէրթանքյ:
- Աղեկ, աման վի՞ր իրիսին կպոնի, որ ինոր ասի՝ մե իգին տուր, էրթանքյ:
Կնիկ իրկան կասի՝ տյու ասա, իրիկ կնգյան կասի՝ տյու ասա:
Կասաբ էլավ կնաց մոտ աղեն, կնիյն էլ կնաց մոտ աղի կնիկ:
Էն՝ ինոր խնթրվավ, էն՝ ինոր խնթրվավ:
Կասի. - Աղե՛կ, թե ծեր տներ քյիչ ի՝ ծե տուն տամ, թե ծեր դյուքհտանքյ քիչ ի՝ դյուքյան տամ:
- Ի՞նչ անեմ, իմ քեռին, իմ խրոխպերներ, ազգ-պարեկամ բյություն էնտեղն են, իմ սրտիս մեջ դրեր եմ, պիտի էրթամ երկիր: Կաղաճեմ, որ քյո տներ, քյո դյուքյհտանքյ էլմ առնես ետ:
Ասաց. - Չէ՛, չէլած պան ի, մէ մարթ որ թըքի, ուր թյուքն կառնի՞ ետ:
Առատուն քյու մալ կխանես մազաթ:
Առաճին տներ խանիցին մազաթ, ինորից վերջ դյուքյհտանքյ իտին, վերջ էլած-չէլած: Ուրիշներ կուգյեն փեյ կզանին, ինքյ փարեն կուտեր կառներ: Ծեռացտկու ճամբեց լաճն պիրեց:
Կնացին մեյտեղ փափոռ կնդան: Ինոնց էլած, չէլած ժողվին լցեցին փափոռի մեջ:
Ասաց. - Ախպե՛ր, փարա տանքյ փափոռ էսա կիշեր կայնցուցենքյ, կուշտ մեյ մեկէլ տեսնանքյ, խե մեյմկու կուշտ խոսենքյ: Տյու Հալաբ կեհաս, ես Ըստամբոլ կմնամ, կմեռնենքյ խաբարաթ չմնանքյ:
Կասաբ, ուր կին, աղեն, ուր կնիկ, կայնան որ պիտի տնեն ճամբախ: Լաճն էլ հիտիվանց կգյար:
Խասան մեջ փափոռին, լաճու ծեռ պռնեց, ասաց. - Առ լաճ տղետ:
Ասաց. - Էտա տղեն ես տվեր իմ քյո տղի տեղ:
Ասաց. - Որ տյու Հալբու քյաղքյի մեջ մեկ օտարական մարթում խամար կզարկեր քյո ախպոր վիզ կթոուցեր, տյու կասե՞ր՝ ես Կասաբե Ջեոմարդ եմ, իմ կնիկն առեր տվեր զիկ, զի տղեյմ քյո տան սպանվի, շա՞ պան ի: Չէ՞, արուն արնի փոխանակ ի:
Կասի. - Ցա՛, մայար տյու էն մա՞րթն ես:
Տառնա Կասաբ, ուր կնիկ ուրենց կթալեն վեր աղի ծեռ ոտաց:

- Էսա աղեկութեն որ տյու արիր մե, մեկ աստուծմե կուգյեր մե, աղորթ զիկ կասին՝ Կասաբե Ջեոմարդ, աման, թյու՛ ջեոմարդութեն մո զիկ չկեր: Ջեոմարդութեն մո քյե կա:

Քիչմ գյախ էլ գյրկափակ էլան: Էն կնաց մտավ փափոռ, կնաց Հալաբ, մէկէլն էլ տարցավ ուր տուն:

Փառք տվին աստծուն, ասին. - Մենքյ էսա մարթու աղեկութնից էլանքյ: Ամմա լաճու բան չարիցին:

[1]ւքյնեն աղեն, ուր կնիկ: Էրազի մեջ կտիսնան փիր ղխթիյար մարթմ կուգյա, կասի. - Որ տյուքյ ծեր տղի արուն ծեր ծեռնով լվացիքյ, ծեր ծեռնով թաղիցիքյ, յոթ խատ ծե պիտի լաճ էլնի:

Առատուն կակխեն, մեյմկու կպատմեն ուրենց էրազ:

Փառք կուտան աստծուն: Աղորթ ինոնց յոթ խատ լաճ կէլնի, վեր լաճերաց ուրախցան:

Հալբու մարթ կխասնի ուր մուրազին, ինոնքյ էլ՝ ուրենց մուրազին:

